

ԱՄՍԷ - ԱՄԻՍ

ՖՐԱՆՍԱ

ԲԱՐԻՋԻ ՀԱՅ ԲԺՇԿ. ՄԻՈՒԹԻԻՆԸ ինչպէս անցեալ տարի, այս տարի ալ ժողովրդական դատախօսութիւններու շարք մը կողմակերպեց Մայիս եւ Յունիս ամիսներու ընթացքին: Խօսեցան Տօբթօրներ Քօլօլեան եւ Գրեգորեան վերերական ակտերու մասին (սիֆիլիս, շերմամիզութիւն, կակուզ կէղ), Տօբթ. Մինասեանց թոքախտի, Տօբթ. Բալասանեան սննդառութեան եւ Տօբթօրներ Ա. Անդրէասեան եւ Սօլաքեան՝ ալքօլականութեան մասին: Շարժանկարով սոյն նիւթերու շուրջ բազմաթիւ հետաքրքրական պատկերներ ցոյց տրուեցան:

Ասոնցմէ դուրս Բժշկ. Միութեան մասնաւոր ժողովներուն զեկուցումներ ըրին Տօբթ. Գրեգորեան՝ նորագիւտ պատուաստով կակուզ կեղի դարմանումի մասին, Տօբթ. Արթէն՝ աղ-դոսկրի բեկումին, դեղագործ Պրն. Խանձեան՝ կարգ մը դեղերու, բանասէր-դեղագործ Պրն. Կ. Յ. Բասմաշեան՝ Բաղարատ անուն հայ բժիշկի մը բժշկական անտիպ երկասիրութեան եւ Տօբթ. Քօլօլեան զտտացուի (scia-bique) նորագոյն դարմանումի մասին: Բժշկ. Միութիւնը հայ բժշկական դատու երիցագոյն անդամին՝ հանդուցեալ Տօբթ. Մատթէոսեանի յիշատակ նուիրեց իր նիստերէն մին ուր յարգանքի խօսքեր ըսին Տօբթօրներ Թորգոմեան եւ Քօլօլեան:

ԱՄՈՒՄԵԱԿԱՆ ԲԺՇԿ. ՎԿԱՅԱԳԻՐ.— Ֆրանսական Eugénique ընկերութիւնը, որ կազմուած է հան-

րածանօթ բժիշկներէ, դիտուններէ եւ հասարակական անձերէ, եւ որու նպատակն է ժողովուրդին մէջ տարածել առողջ եւ հիւանդութիւններէ զերծ սերունդ ստեղծելու եւ հետեւաբար մարդկային ցեղը աղնուացնելու համար դիտական տուեալներ ու ծանօթութիւններ, «Ամուսնական բժշկ. վկայագրի» շուրջ դատախօսութիւններու շարք մը սարքած էր աշխարհահռչակ Բրօֆ. Բինաուի եւ Բրօֆ. Ռիշէի նախագահութեան տակ: Մասնագէտներու կողմէ՝ ինչպէս Բրօֆ. Letulle, Տօբթ. Apert, Queyrat, Heuyer եւն. ուսումնասիրութեան թիւղէրփիւղի (թոքախտ եւլյն.), վերերական, ջղաւիյն եւ ընտանեկան կարգ մը հիւանդութիւններու ազդեցութիւնը սերունդին վրայ: Տօբթ. Schreiber պարզեց նախ քան ամուսնութիւնը բժշկական քննութիւն եւ ամուսնական վկայագիր պարտադրող երկիրներու օրէնսդրութիւնը: Տօբթ. Գրեգորեան, անդամ ընկերութեան, դիտել տուաւ թէ առաջին անգամ Հայերուն մէջ ամուսնական վկայագիրը պարտադիր եղած է 1904ին, Խրիմեան Հայրիկի կողմէ, իսկ վերջը 1920ին Պոլսոյ Պատրիարքարանին կողմէ: Բոլոր դատախօսները եկան այն եղրակացութեան թէ անհատի եւ ցեղի աղնուացման համար, ամուսնութենէն առաջ բժշկական քննութիւնը եւ հետեւաբար ամուսնական վկայագիրը կենսական անհրաժեշտութիւն են: Բրօֆ. Բինաու, յայտնեց թէ շուտով այդ ուղղութեամբ օրինադրած մը պիտի ելնէր: Բարլամենդի Քուէարկութեան:

«ԷՕԺԷՆԻՔ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԵՆԵ-
ՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԸՆԴ-
ՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ տեղի ունե-
ցաւ Փարիզի մէջ, Յուլիոսի սկիզ-
բը, նախադահլածեամբ՝ Լ. Տարվինի,
որդի՝ աշխարհահռչակ Տարվինի Օ-
րակարգի վրայ կային հետեւեալ խըն-
դիրները.— Ամուսնական բժշկ. վի-
յադիր, Համարիւն ամուսնութիւններ
եւ Ներգաղթ: Երեք հարցերու քննու-
թեան նպատակն էր գտնել այնպիսի
միջոցներ, որոնցմով կարելի ըլլա-
յո՞ւնէր անհրաժեշտ ամուսնու-
թիւնները եւ հետեւաբար ազնուացնել
սերունդը եւ մարդկային ցեղը: Բու-
ժանքի մէջ պիտի անդրադառնանք
այս շատ կարեւոր խնդիրներուն:

ԲԺՇԿԱՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՅՐԱՆ-
ՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻՆ
ԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ (ՄԱՅԻՍ 12)
Պ. Բոսմաջեան՝ Լէնինէ Լալաս-
թինի ու Վէնշոնի կողմէ սե-
ւամաղձային եւ մաղձային խառ-
նուածքներու մասին կատարուած աշ-
խատութեան առթիւ՝ ղեկուցում մը
ըրաւ Ամիրտովլաթի քառանկամ դրու-
թեան եւ, ճիւղարկուածեան մասին:
Ամիրտովլաթ չորս տարրերը, հող,
ջուր, օդ եւ հուր, կը մերձեցնէ չորս
հիւթերու հետ, արիւն, մաղաս, դե-
ղին մաղձ եւ սեւ մաղձ, որոնք
խառնուածքներու տեղը կը բռնեն:
Բայց Ամիրտովլաթի աշխատութեանց
շահեկանութիւնը հոն չէ, այլ հիւ-
թաբուսութիւնը դործածած է ան, եւ
բաւ առ բաւ կ'ընէ, թէ երբ մէկը
հորթին կամ ուղտին փշոքած ամոր-
ձիքներն ուտէ, մերձաւորութեան փա-
փաքը կը շատնայ. եւայլն:

Նոյն այդ ժողովին, Տօքթ. Թոր-
գումեան բժշկապատմութեան Թանգա-

րանին նուիրեց իր հօր բժշկական եւ
վերաբուսական գործիքները պարու-
նակող տուի մը:

ՎԵՐՋԵՐՍ ՆԻՍԻ ՄԷՋ ՄԵ-
ՌԱԻ ԳՈՒԷ, ՅՐԱՆՍԱՅԻ ԴԵՂԱ-
ԳՈՐԾԸ, որ մեծ ժողովրդականութիւն
շահած էր իրկատարած բժշկութիւն-
ներով: Գուէի մեթոտը կը կայանար
ինքնամեկադրութեան մէջ: Ան կը
յանձնարարէր իրեն դիմող հիւանդ-
ներուն եւ առ հասարակ բոլոր
անոնց որոնք ոչ եւ է կերպով, հո-
գեպէս թէ ֆիլիքապէս, կը տա-
ւապէին, առաւօտ եւ երեկոյ
քան անգամ թուրակորէն կրկնել
հետեւեալ նախադասութեանը. «Ամէն
օր, ամէն կերպ, աւելի եւ աւելի կը
լաւնամ»: Արտաքին թէ ներքին թե-
լադրութեան (suggestion) մեծ ազդե-
ցութիւնը մեր ջղային դրութեան
վրայ ծանոթ իրողութիւն մը ըլլա-
լով դեւաւ կարելի է բացատրել
Գուէի գտած յաջողութիւնը կարգ մը
ջղային եւ հոգեկան խանգարումներու
հնթակայ հիւանդներու մօտ որոնք
լէզէօններ կը կաղմեն ներկայ ան-
հաւասարակշիռ դարուն մէջ: Պա-
տասխանելով Կրթական Նախարարին
մէկ հարցումին, Յրանսայի Բժշկական
Ակադեմիան յայտնեց թէ Գուէի մե-
թոտը նոր չէ, թէ ջղային հիւանդու-
թեանց մասնագէտ բժիշկներ յաճախ
կը կերարկեն թեւադրութիւնը եւ թէ
Գուէ երբեք չէ յաջողած բուժել
ֆիլիքապէս - կաղմական հիւանդու-
թիւններ, ինչպէս քաղցկեղը, այլ
ընդհանրապէս ուշացնելով վերաբու-
սական դործողութիւնը, պատճառ ե-
ղած է հիւանդութեան ծանրանալուն,
երբեմն ալ հիւանդի մահուան:

ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԺՇԿԱՊԵՏ Ս. Պ. ՇԱՀՊԱՐՈՆ-ԵԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ 40ԱՄ-ԵԱԿԸ տօնուեացաւ թիֆլիսի մէջ, Մայիսի վերջը: Յոգեւեարը մէկն է այն սակաւաթիւ բժիշկներէն որոնք ութսուհաւան թուականներուն հաս-հաս քաղաքներու մէջ կուի կը մղէին թանձրացած սղխողութեան — զանա-զան «թէւլաք»ներու «Տատեր»ներու ու «Ֆաւճի»ներու դէմ:

Բնան տարի առաջ կը հիմեւ իր մասնաւոր հիւանդանոցը որ ամբողջ Կովկասի մէջ գրեթէ միակ բուժա-րանն էր կանանց հիւանդութիւններու համար:

Բժշկապետը այժմ 65 տարեկան է հեղահամբար եւ համեստ բնաւորութեամբ, եւ եւսանդուն կը շարունակէ իր հանրագում սերած գործը:

ՊԱՅԲԱՐԸ ՍԻՖԻԼԻՍԻ ԴԷՄ.—

Սիֆիլիսի դէմ պայքարող մասնաւոր բժշկական խմբակ մը, բաղկացած 2 բժիշկի, 2 մանկաբարձուհի եւ 2 հիւանդատուհի էրաւուէ գաւառ սկսած է շրջիւ:

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ՄԵԾ ԴԱՐ-ՄԱՆԱՏՈՒՆ ՄԸ պիտի հաստատէ Պ. Պողոս Նուպար, յատկապէս չքաւոր կիներու ու մանուկներու ինչպէս նաեւ ընդհանուր հասարակութեան համար ուր կարենան ձրի դարման ու դեղ ստանալ եւ թեթեւ գործողութեանց ենթարկուիլ: Դարմանատունը պիտի ունենայ չորս ճիւղ, չորսն ալ մասնաւոր բժիշկներու տեսչութեան ներքեւ:— 1.— Կիներու հիւանդութիւններ, 2.— Երեխաներու հիւանդութիւններ, 3.— Աչքի հիւանդութիւններ, 4.— Բիթի, ականջի եւ կրկորդի հիւանդութիւններ: Դարմանատունը պիտի ունենայ իր ընդունելութեան սենեակները եւ իր մասնաւոր դեղարանը:

ՄԱՐՄԵԱՄԱՐՁԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՏՕՆ.— Մարմամբարդական գերագոյն խորհուրդի գիտական կոմիտէն որոշած է Օգոստոսին կազմակերպել մարմնամարդական հայաստանեան տօն, որուն պիտի մասնակցին Հայաստանի բոլոր գաւառներու մարմնամարդական կազմակերպութիւնները:

Տօնի նախապատրաստական աշխատանքները կատարելու համար ընտրուած են զանազան յոռիմտաբողոքներ:

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՋԱԿԱՆ Գործավարութիւնը ձեռնարկած է Հիւանդներու Նախազգուշացման Օրի կազմակերպութեան, նպատակ ունենալով բժշկական դործի ժողովրդականացումը, ֆիզիքական կրթութեան տարածումը գիւղերու մէջ, ինչպէս նաեւ արհեստավարական եւ ընկերային հիւանդութիւններու դէմ պայքարի միջոցներու ուսուցումը:

“ԲՈՒԺԱՆՔ”Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

«Բուժանք» հասցրով պիտի պատասխանէ իր ընթերցողներու այն բոլոր հարցումներուն, որոնք ընդհանուր շահեկանութիւն կը ներկայացնեն:

Ո. Ս. (Պերլին).— Պաղ Լաթը (comprime) տաքցած պարաբային պուղով կը վերանորոգեն, պարապէս շարունակելու համար անոր տղդեցութիւնը, որ է, պարաբային համեմատ, կամ reaction յառաջ բերել եւ կամ յաճախ ուստիկ reaction մը (բարբառում, ջերմութիւն եւլլն) նուազեցնել: Առիթը պիտի ունենանք այդ հարցի մասին խօսելու:

Մ. Վ. (Պերլին).— Մորթային եւ միզանքային հիւանդութիւններու, հետեւաբար մասնագիտութիւններու մէջ ո եւ է կապ չկայ: Բժիշկ մը կրնայ երկու մասնագիտութիւններն ալ սորված ըլլալ: Սակայն ծանուցումներու մէջ տեսնուած «մորթային եւ միզանքային հիւանդութիւններ»ը ուղորդար պէտք է թարգմանել «սիֆիլիս եւ ջերմամիզութիւն» կամ աւելի ճիշտ «վներական հիւանդութիւններ»: